

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Շուշան Կարենի Հակոբյանի «Գյումրի քաղաքի XIX դարի վերջի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի ճարտարապետությունը և արդիականացման խնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԺԸ 00. 01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան հայցելու նպատակով:

Իր պատմության ընթացքում բազմաթիվ փորձություններ կրած Գյումրին այսօր էլ է կանգնած լուրջ մարտահրավերների առաջ ու քաղաքային մշակույթի զարգացման ուղղությունները հստակեցնելու և այդ միջավայրը համակողմանի վերլուծելու կարիք ունի: Ատենախոսության մեջ առանձնացված ժամանակագրական հատվածը Գյումրիի քաղաքաշինական մշակույթի ձևավորման և կայացման ժամանակաշրջանն է, երբ ցարական Ռուսաստանի կողմից մշակվում են քաղաքի հատակագծման և կառուցապատման սկզբունքները, իսկ խորհրդայնացման առաջին տարիներին՝ պայմանավորված հանրության լուսավորակրթական, արտադրական, հասարակական և հոգևոր կյանքի վերելքով, քաղաքը կառուցապատվում է հասարակական նոր շենքերով: Գյումրու ճարտարապետական ժառանգության ու մասնավորապես հասարակական շենքերի քննությանը մասնագիտական գրականության մեջ անդրադարձ կա, ինչի մասին ատենախոսն էլ է ծանոթ և ներկայացրել է գրականության տեսության մեջ: Սակայն նմանատիպ շենքերի հորինվածքային, կառուցվածքային և գեղարվեստական առանձնահատկությունների համալիր քննության անհրաժեշտությունն ակնհայտ է, մանավանդ, որ Գյումրու քաղաքային կերպարի վերականգնումն ու հետագա զարգացումների տեսլականն այսօր ընթացքի մեջ է, ինչով և պայմանավորված է թեմայի նաև արդիականությունը:

Ատենախոսության նպատակն է Գյումրիի նշված ժամանակաշրջանի հասարակական շենքերի ճարտարապետության քննությունը, որը հնարավորություն է տալիս այդ ժառանգության պահպանության և վերաօգտագործման համար, ինչպես ատենախոսն է ասում, հանձնարարականներ մշակել: Այդ առաքելության իրականացումն ատենախոսը տեսնում է պատմական աղբյուրագիտական և հասարակական շենքերին վերաբերող արխիվային նորահայտ նյութերի վերահանման, դրանց հատակագծային և ծավալատարածական առանձնահատկությունների բացահայտման, ճարտարապետական ժառանգության գնահատման, «գույքագրման» և հաշվառման հնարավորությունները դիտարկելու մեջ: Կարևորում ենք այն հանգամանքը, որ ատենախոսը աշխատանքը գրելիս օգտվել է ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության արխիվային վկայագրերից և Հայաստանի ազգային արխիվից՝ շրջանառության մեջ դնելով նորահայտ նյութեր, որոնք հետագա հետազոտությունների համար էլ են հնարավորություններ բացում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, գլուխներն ամփոփող եզրակացություններից, հիմնական եզրակացությունից, գրականության ցանկից, պատկերագրական-գրաֆիկական աղյուսակներ պարունակող հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեման, արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտության եղանակը, ժամանակագրական սահմանները, նորույթն ու գործնական նպատակը:

«Գյումրու քաղաքաշինական զարգացումը» վերնագրված՝ աշխատության առաջին գլխում ատենախոսը հետևում է քաղաքի տարածական միջավայրի ձևավորման

պատմական ընթացքին՝ ներկայացնելով ինչպես Ռուսական կայսրության կողմից նախաձեռնած վերակառուցման ծրագրերը, այնպես էլ խորհրդայնացման առաջին տարիների Լենինական-Գյումրիի պարբերաբար թարմացված գլխավոր հատակագծերը, կառուցապատման սկզբունքներն ու ժամանակաշրջանին բնորոշ քաղաքաշինական մոտեցումները: Հատուկ առանձնացված է Դավիթ Չիսյանի գործունեությունը Գյումրու քաղաքաշինական նոր կերպարի կերտման գործում: Այս գլխում տեղին չենք համարում համատեքստից դուրս մնացած, առաջին «Պատմաաշխարհագրական ակնարկ» վերնագրված ենթագլուխը, մանավանդ որ պատմական տեղեկություններն էլ ներկայացված չեն: Այստեղ ներկայացված շինարարական նյութերին և կառուցվածքային լուծումներին վերաբերող մասը կուզենայինք տեսնել երկրորդ գլխում: Աղյուսակների տեսքով ներկայացված են Գյումրու փողոցների անվանումները տարբեր ժամանակաշրջաններում, որը նպատակահարմար կլիներ զետեղել հավելվածում:

Երկրորդ հիմնարար գլուխը առանձնացված և տիպաբանված օրինակներով ներկայացնում է Գյումրու խնդրո առարկա ժամանակաշրջանի հասարակական շենքերի (թատրոններ, կինոթատրոններ, դպրոցներ, մանկապարտեզներ, ակումբներ, բժշկական համալիրներ, հոսպիտալներ, հիվանդանոցներ, հյուրանոցներ, բաղնիքներ) հատակագծային, ծավալատարածական լուծումները, անդրադառնում դրանց գործառնական նշանակությանը, գեղարվեստական արտահայտչականությանը: Ատենախոսն, իրավացիորեն նշում է, որ այս կառույցներում նախախորհրդային ժամանակաշրջանից խորհրդայինին անցումը հստակ արտահայտված է ճակատների ճարտարապետական հորինվածքներում, որտեղ պճնագարդ դեկորը փոխարինվում է ավելի զուսպ արտահայտչամիջոցներով:

Գլխի ամփոփման մեջ նշվում է նաև, որ կառույցների ոճական առանձնահատկությունները բազմատեսակ են՝ ընդգրկելով հայկական և ռուսական ոճերի համատեղմամբ եվրոպական ճարտարապետությանը բնորոշ հասկանիշներ: Նեոկլասիցիզմ, էկլեկտիկա, մոդեռն ոճերին ավելանում է Գյումրուն հատուկ ոճական արտահայտչականությունը՝ շարվածքի «Ալեքսանդրապոլ» (սև և դարչնագույն տուֆի համադրությունը մեկ հարթության մեջ) և «Ղայթան դարձ» (տուֆի և դրանց միջև սպիտակ շաղախի կապակցումը) դրսևորմամբ:

Աշխատության երրորդ գլխում արժեքավոր ենք համարում Գյումրի քաղաքի հասարակական շենքերի ճարտարապետական ժառանգության իրավիճակային գնահատման, հաշվառման և պահպանման ու վերաօգտագործման գործնական առաջարկների դիտարկումները: Դրանք ունեն նաև հեռանկարային կիրառություն՝ ներկայացվել են Գյումրու Կումայրի արգելոց-թանգարանին, որն իր հետագա մշակութային ծրագրերում դրանք ներառելու հնարավորություն է տեսնում: Արդիականացման համատեքստում կարևոր առաջարկ է «Իրականության ընդլայնման» մեթոդի կիրառումը, որը ենթադրում է տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների հնարավորությունների օգտագործում մշակութային ժառանգության պահպանության և վերաօգտագործման գործընթացներում:

Այսուհանդերձ աստենախոսության վերաբերյալ ունեն որոշ դիտողություններ: Նախ կառուցվածքի հետ կապված: Շարադրանքում ակնառու է գլուխների ոչ հավասարազոր ներկայացվածությունը (առաջին գլուխ՝ 10-24 էջեր, երկրորդ՝ 25-75, երրորդ՝ 76 -111): Երկրորդ գլխում Գյումրիի հյուրանոցներն ու բաղնիքները ներկայացնելիս, տեղին կլիներ խոսել այս տարածաշրջանում նմանատիպ կառույցների ճարտարապետաշինարարական ավանդույթների մասին (Անիի հյուրատների և բաղնիքների օրինակը): Երրորդ գլխում տեղին չենք համարում պատմական կառույցների համաշխարհային օրինակների

արդիականացման և վերաօգտագործման նախագծերի առանձնացված և մանրամասն քննությունը: Ատենախոսությունը կշահեր եթե հավելվածում՝ գրաֆիկական կատարմամբ ավելի լիարժեք ներկայացված լինեին վերլուծությունները:

Վերաթվարկյալ դիտողություններն ուղղվող կարգի են և նպատակ ունեն ավելի ամբողջական և բովանդակային տեսնել ատենախոսությունը:

Աշխատանքն, ընդհանուր առմամբ, շարադրված է գրագետ, մասնագիտական լեզվով և փաստական նյութի, աղբյուրների և իրողությունների քննական-համեմատական վերլուծության եղանակով:

Վերաթվարկյալ դիտողություններն ուղղվող կարգի են և նպատակ ունեն ավելի ամբողջական և բովանդակային տեսնել ատենախոսությունը:

Ատենախոսությունն ունի գիտական և կիրառական արժեք, լիովին բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած՝ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԸ 00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս, ճարտ. դոկ. պրոֆ.

Լ.Կիրակոսյան

10.06.2021թ.

